

«ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԻՔ»

Ներքաղաքական խնդիրները լուծել ազրեսիվ արտաքին քաղաքականությամբ

Րաֆֆի Քանդյան

Շարժառիթը

Թուրքիայի արտաքին քաղաքականության աճող արմատականացումը մի քանի աղբյուր ունի: Առաջինն այստեղ գոյություն ունեցող արտասովոր ծանր տնտեսական դրությունն է և թուրքական լիբալի շարունակական արժեզրկումը, դրա հետ կապված՝ «Արդարություն և զարգացում կուսակցության» (ԱԶԿ, թուրք.՝ Adalet ve Kalkınma Partisi) աջակցության մակարդակի անկումը: Այն իր հերթին շարունակ ուժեղացնում է առանց այդ էլ արդեն երկար ժամանակ գոյություն ունեցող ճնշումը ընդդիմադիր կուսակցությունների, լրատվամիջոցների և տարաձայն կարծիք ունեցողների վրա: Տնտեսական ճգնաժամը թեժացրեց էներգակիրների որոնումը՝ առնվազն երկու պատճառով: Առաջին հերթին պետք է կրճատվեին էլեկտրաէներգիայի ներմուծման չափազանց բարձր ծախսերը և նոր աղբյուրների հայտնաբերման միջոցով գեներացվեին նոր եկամուտներ: Ինչպես նշված է, այս բոլոր հարցերը այս կամ այն ձևով սերտորեն փոխկապակցված են և, ահա, դա բարդացնում է դրությունը:

Թուրքիայի զարգացումները մանրագին հետազոտվում են ու արժեքավորվում արտերկրում: Այսպես, «Բերթելսման հիմնադրամ»-ը (“Bertelsmann Stiftung”) BTI 2020 զեկույցում (Bertelsmann Transformation Index) Թուրքիան բնորոշում է որպես «դե ֆակտո բռնապետություն»¹:

Շեղող հնարք և հույսի ենթադրյալ շողեր

Քանի որ տնտեսական դրությունը արտասովոր ծանր է, և քաղաքացիները հետզհետե ավելի են կարիքի մեջ ապրում, բեմադրվում են հնարքներ նրանց շեղելու համար: Սա վերաբերվում է շաբաթներ առաջ Սուրբ Սոֆիայի՝ մզկիթի փոխակերպմանը, չնայած դեռ 15 ամիս առաջ նախագահ Էրդողանը կտրականապես դեմ էր դրան: Այժմ, երբ վիճակն իր համար ավելի դրամատիկ դարձավ, նա պաշտպանեց այդ: Իհարկե, դրա միջոցով նա կարողացավ ոգևորել սոսկ կրոնական շրջանակներին: Դրանով ոչինչ չփոխվեց աջակցության մակարդակի առումով: Կողմնակի արդյունք էր, որ է՛լ ավելի մեծացավ ԱԶԿ-ի իշխանության ընթացքում աճած՝ ուլտրա-պահպանողական կրոնական հոսանքների / աղանդների նշանակությունն ու ազդեցությունը: Այժմ միանգամայն բաց քննարկվում է Եվրոպայի խորհրդի Ստամբուլյան կոնվենցիայից դուրս գալու մասին: Այն պաշտպանում է կանանց իրավունքները և անձամբ ստորագրել է Էրդողանը 2011 թ.: Կարելի է հետաքրքրվել վերջնական որոշմամբ:

¹ https://bti-project.org/content/en/downloads/reports/country_report_2020_TUR.pdf.

Հավանորեն, շեղող հնարքներին է վերաբերվում նաև 2020 թ. օգոստոսի կեսերին Սև ծովում գազի հանքավայրերի իբր թե հայտնաբերումը: Սկզբնական 800 միլիարդ խորանարդ մետրից արագորեն դարձել է 320 միլիարդ խորանարդ մետր: Եվ եթե նույնիսկ դա ճիշտ լիներ, շահագործումը կպահանջեր ևս մի քանի տարի, այսպիսով՝ ֆինանսական թերթևացումը դեռ որոշ ժամանակ կսպասեր: Բայց ճշտապահ դիտորդները ուշադրություն են հրավիրել այն բանի վրա, որ ճգնաժամի ժամանակ այդպիսի լուրերը շատ լավ կոնյունկտուրա ունեն: 2020 թ. օգոստոսի 22-ի իր “Özgürüz” պուստկում 2007 թ. ի վեր Ջան Դյունդարը հաշվում է գազի և նավթի հայտնաբերման ընդհանուր հինգ հայտարարություն՝ բոլորը տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և խորհրդարանական ընտրություններից անմիջապես առաջ, որոնց մասին հետագայում ոչ մեկն այլևս երբեք ոչ մի բան չի լսել²:

Ընդդիմությունը

2019 թ. դեկտեմբերին նախկին վարչապետ Ահմեդ Դավութօղլուն հիմնեց «Ապագա» կուսակցությունը (ԱԿ, թուրք.՝ Gelecek Partisi), 2020 թ. մարտի 9-ին Ալի Բաբաջանը, որն աշխատում էր որպես փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար և էկոնոմիկայի նախարար, պաշտոնապես առաջարկեց հիմնել նոր կուսակցություն՝ «Ժողովրդավարություն և առաջընթաց»-ը (ԺԱԿ, թուրք.՝ Demokrasi ve Atılım Partisi): Հետաքրքիր է, որ Դավութօղլուն, ինչպես Բաբաջանը, ԱԶԿ-ի հիմնադիր անդամներ են:

Որ Էրդոդանը անգործությամբ չէր հետևի այդ զարգացումներն, շատ շուտով Դավութօղլուն ստիպված էր զգալ այդ: 2020 թ. հունվարի 21-ին Թուրքիայի հիմնադրամների գլխավոր տնօրինությունը վերահսկողություն ստանձնեց «Գիտության և արվեստի հիմնադրամ»-ի վրա (ԳԱՀ, թուրք.՝ Bilim ve Sanat Vakfi), որը Դավութօղլուն համահիմնադրել էր 1986 թ.՝ երկրի պահպանողական մտավորական զանգվածին օժանդակելու և առաջ մղելու համար:

Դրանից առաջ՝ 2019 թ. դեկտեմբերին, Դավութօղլուի ղեկավարության ներքո մեկ այլ կառույց՝ Շահիրի համալսարանը, հանձնվեց Սարմարայի պետական համալսարանին՝ բարձրագույն դպրոցի խորհրդի կողմից մեջբերված ֆինանսական խնդիրների պատճառով³:

Հարձակումների թիրախ միայն «Ժողովուրդների ղեմկրատական կուսակցություն»-ը (ԺԴԿ, թուրք.՝ Halkların Demokratik Partisi) չէ: Մի օրինակ. Ստամբուլի ընդդիմադիր «Ազգային հանրապետական կուսակցության» (ԱՀԿ, թուրք.՝ Cumhuriyet Halk Partisi) ղեկավար Ջանան Քաֆթանչըօղլուն, ահա, 2019 թ. սեպտեմբերին դատապարտվեց 9 տարի և 8 ամիս բանտարկության՝ իբր թե սոցիալական մեղիայում իր՝ անցած վեց տարիների գրառումների համար: Իր թվիթթերներից մեկում նա գրել էր. «Հայոց ցեղասպանությունը սկսվեց պատմության այս օրը: Մենք հիշում ենք մեր հայ քաղաքացիներին, որոնք կոտորվեցին»: Իրական պատճառը կարող է լինել այն, որ նա համարվում է 2019 թ. մարտի կամ հունիսի ՏԻՄ ընտրություններում ԱՀԿ-ի հաղթանակի ճարտարապետ⁴:

² <https://us12.campaign-archive.com/?u=74b>.

³ <https://www.al-monitor.com/pulse/originals/2020/01/turkey-seize-foundation-erdogan-rival-davutoglu.html>.

⁴ <https://ahvalnews.com/canan-kaftancioglu/turkish-court-sentences-opposition-istanbul-chief9-years-and-8-months-prison>.

2019 թ. մարտ / հունիս ամիսների ՏԻՄ ընտրություններում ԱԶԿ-ն պետք է «դառը» կորուստներ կրեր, նաև՝ Ստամբուլի և Անկարայի պես խոշոր քաղաքներում: Այնուամենայնիվ, ԱԶԿ-ին հաջողվում է իր կամքն անցկացնել: Օրինակ՝ Ստամբուլում. 2019 թ. ՏԻՄ ընտրություններում էքրեմ Բամաօղլուն ընտրվեց խոշոր Ստամբուլ քաղաքի քաղաքապետ, այն էլ՝ մեծամասնականով: Այսուհանդերձ, դա չի նշանակում, որ նա, կարող է, ըստ ցանկության, իր կամքն անցկացնել, քանի որ ԱԶԿ-ն մեծամասնություն է գրավում քաղաքային խորհրդում: Այն ունի 39 փոքր քաղաքային ինքնավարություն, որոնցից 24-ը պատկանում են ԱԶԿ-ին: Քաղաքային խորհրդի բյուջեն և մուտքերը եկամտի վճռական աղբյուր են, և ԱԶԿ-ն պատրաստ չէ հրաժարվել դրանցից: Ստամբուլում է ստացվում ազգային համախառն ներքին արդյունքի 31%-ը:

2019 թ. հունիսից Էրդողանը կա՛մ հրամանագրեր է արձակել խոշոր քաղաքների քաղաքապետարանների լիազորությունները նախարարություններին ետ վերադարձնելու համար, կա՛մ ԱԶԿ-ի կողմից ղեկավարվող Ստամբուլի քաղաքային խորհրդին հաջողվել է ստանձնել որոշումներ կայացնելու իրավասությունը:

Անկարան ձգտում է ի դերն հանել Բամաօղլուի վերընտրվելու հեռանկարները և ԱԶԿ-ի տասնամյակների «հաճախորդներին» զգալի եկամուտ վերադարձնել⁵:

Անշուշտ, ԱՀԿ-ում փրփրած են: 2018 թ. նախագահական ընտրություններում նրա թեկնածուն՝ Սուհարբեմ Բնջեն, առաջին փորձից ստացավ ձայների 30.64 %-ը, բայց ստիպված էր ընդունել պարտությունն Էրդողանի նկատմամբ: Անհասկանալի մնաց, թե ինչու ԱՀԿ-ի նախագահ Քըլլչդարօղլուն Բնջեին քննադատեց «անհաջողության» պատճառով: Ընդ որում, 2018 թ. խորհրդարանական ընտրություններում ԱՀԿ-ն ամրագրել էր ձայների 22 %-ից ճիշտ մի փոքր ավելին: Հետո Բնջեն ձգտում էր կուսակցության նախագահությանը, բայց կուսակցության ցանկալի համագումարը չկայացավ պակաս ձայների պատճառով, այսինքն՝ Քըլլչդարօղլուի շրջապատի⁶: 2020 թ. օգոստոսին լուրեր տարածվեցին, թե Բնջեն ծրագրում է հիմնել նոր կուսակցություն, ինչը նա հերքեց: Նա նշեց, որ ինքը՝ Քըլլչդարօղլուի ղեկավարման ոճի քննադատը, ցանկանում է կյանքի կոչել “Bin Günde Memleket Hareketi” շարժումը, որը և տեղի ունեցավ սեպտեմբերի սկզբին: Քըլլչդարօղլուին հավատարիմ անձինք պահանջում են Բնջեին դուրս նետել կուսակցությունից:

2023 թ. նախատեսված խորհրդարանական ընտրություններում որոշիչ նշանակություն ունեն են ոչ միայն հայտնի ԱԶԿ-ի, ԱՀԿ-ի, «Ազգայնական շարժում կուսակցության» (ԱՇԿ, թուրք.՝ Nationalist Movement Party), «Լավ» կուսակցության (թուրք.՝ İyi Parti) և ԺԴԿ-ի ընտրողները, այլ նաև նրանք, ովքեր մինչև այժմ դեռ չեն ընտրել և բնորոշվում են որպես «Z սերնդին» պատկանող: Նրանց թիվը մատնանշվում է մոտավորապես 13 միլիոն: Նրանց վճիռը որոշիչ կլինի, նաև՝ նախագահ Էրդողանի համար, մանավանդ որ նրանք բարեմիտ չեն նրա նկատմամբ⁷:

Նմանապես սոցիալական մեդիայի ճնշումը (2020 թ. հուլիսի վերջին խորհրդարանն ընդունեց համապատասխան օրենք) հանգեցրեց այդ «Z սերնդի» դժգոհությանը: Քանի որ, եթե

⁵<https://www.al-monitor.com/pulse/originals/2020/08/turkey-akp-grabs-authority-ofmayors-with-chp-istanbul-chora.html>.

⁶ <https://www.dw.com/de/diet%C3%BCrkischeopposition-schafft-sichab/a-45018311>

⁷ <https://www.dw.com/de/generation-z-setzterdogan-unter-druck/a-54037038>.

մատակարարը 48 ժամվա ընթացքում «կասկածելի բովանդակությունը» չի ջնջում, նա կարող է պատասխանատվության ենթարկվել եվրոյով հաշվարկված մինչև 1.2 միլիոնի հասնող տուգանայիններով: Եթե վիրավորական բովանդակությունը չի հեռացվում, 4 ժամվա ընթացքում վեբ էջերն արգելափակվում են: Երբ բոլոր հեռուստաալիքները, չնչին բացառություններով, նույնն էին հեռարձակում, և կառավարության հասցեին քննադատությունը կարող էր վտանգավոր լինել, ինչը շատ տարբեր չէր տպագիր մամուլի դեպքում, շատերը, նաև «Z սերնդի» ներկայացուցիչները, սոցիալական մեդիան «հայտնագործեցին» իբրև ազատության ապաստարան և, համապատասխանորեն, օգտագործում էին: Այսօր դա գրեթե չկա:

«Երկնագույն հայրենիք»

Արտաքին քաղաքականության արմատականացումը ունի նաև պատմական / գաղափարական շարժառիթ: Դեռ 1990-ական թթ. պրոպագանդվում էր «Նեոօսմանյան քաղաքականությունը» (“Yeni Osmanlılık”): Դրա նպատակը կայանում էր թուրքերի ինքնության ու մշակույթի մասին պատմության դատողությունը շուռ տալու և սրբագրելու մեջ, ինչը համարվում էր Մուսաֆա Քեմալ Աթաթուրքի արևմտյան կողմնորոշման անժուժկալ չափազանցություններից մեկը: Հետագայում Էրդողանը «օդում որսաց» այդ քաղաքականությունը: Ընդ որում, շեշտադրվեց դրա իսլամական բաղադրիչը: Նաև սրան ավելացվեց տարածքային բաղադրիչը, որը նպատակ էր դրել շտկել Լոզանի կողմից պարտադրված «անարդար» սահմանները: Առաջին համաշխարհային պատերազմից հետո «ազատագրական պատերազմի» ընթացքում ընդունված «Ազգային պակտ»-ը (misak-ı milli) դեռ որպես նոր Թուրքիայի մաս էր նախատեսում այսօր հունական Էգեյան կղզիները, ինչպես նաև՝ Սիրիայի հյուսիսը և Իրաքը, ներառյալ՝ Մոսուլը:

2006 թ. ծովակալ Ջեմ Գյուրդենիզը ներկայացրեց «Երկնագույն հայրենիք»-ի (“Mavi Vatan”) կոնցեպցիան: Հետագայում ծովակալ Սիհաթ Յաջին զարգացրեց այն: Այդ դոկտրինը ներկայիս տեսքով մենք տեսնում ենք սկսած 2015 թ., որը հնարավոր դարձավ իսլամիստական և ծայրահեղ ազգայնական ուժերի «հաշտեցման» միջոցով: Այն հիմնվում է երեք հիմնական տարրերի վրա: Դրանցից առաջինը արտաքին քաղաքականության ռազմականացումն է: Դա նշանակում է, որ առաջնային է ռազմական ուժի օգտագործումը, դիվանագիտությունը գտնվում է երկրորդ տեղում: Երկրորդ՝ Թուրքիայի պաշտպանությունը սկսվում է սահմաններից այն կողմ: Երրորդ՝ այդ ռազմավարությունն իրականացնելու համար պետք է զարգացվի ռազմաարդյունաբերական համալիրը⁸: « «Երկնագույն հայրենիք»-ի պաշտպանությունը կարևոր է ճիշտ այնքան, որքան ջանքերը, որ մենք գործադրել ենք մեր հայրենի երկիրը պաշտպանելու համար», - ասաց նախագահ Էրդողանը 2020 թ. օգոստոսի 18-ին: «Մենք կվերցնենք այն ամենը, ինչը [Թուրքիային] է հասնում Միջերկրական, Էգեյան և Սև ծովերում», - ասաց նա օգոստոսի 26-ին:

Ուժի պրոյեկցիաներ՝ արտերկրի օգնությամբ

Եթե հասարակությունն այսօր ականատես է դառնում Թուրքիայի վիթխարի ուժի պրոյեկցիային, լինի դա Լիբիայում, թե արևելյան Միջերկրածովում, և դրան վերաբերվում է

⁸ <https://web.archive.org/web/20200615135132/https://www.gazeteduvar.com.tr/yazarlar/2020/06/15/mavi-vatanve-turkiyenin-yeni-guvenlik-doktrini/>.

շատ լուրջ, ապա դա երկար տարիների շատ համակարգայն կերպով իրականացված սպառազինման արդյունք է՝ արտասահմանի օգնությամբ:

Այսպես, “Blohm+Voss”-ի հետ պայմանագրի շրջանակներում Yavuz դասի MEKO 200 TN-I չորս ֆրեգատները կառուցվեցին գերմանական ոճով և ջուրն իջեցվեցին թուրքական “Gölcük Donanma Tersanesi” ռազմածովային նավաշինարանում, որին հետևեցին Barbaros դասի չորս ֆրեգատները՝ հակամակերեսային պատերազմի (ASuW), հակասուզանավային պատերազմի (ASW) և հակաօդային պատերազմի (AAW) հաղթահարման համար: Երկու ռազմանավերը կառուցեց Համբուրգի “Blohm+Voss” նավաշինարանը, մյուս երկուսը կառուցվեցին “Gölcük” ռազմածովային նավաշինարանում՝ գերմանական աջակցությամբ⁹: Սկսած 2000 թ. Թուրքիան ինքնուրույն կառուցում է կորվետներ: Մի խոսք սուզանավերի վերաբերյալ. “Thyssen Krupp Marine Systems”-ը (TKMS) թուրքական մի ձեռնարկության հետ միասին կառուցեց 214 դասի 6 որսորդ-սուզանավ¹⁰:

“TCG Anadolu”-ի պատրաստումով Թուրքիան կկարողանա մշակել հատուկ ուժային պրոյեցիաներ Արևելյան Միջերկրածովում¹¹: Խոսքն ավիակրի կամ երկկենցաղ հարձակողական նավի մասին է: Այն նույնական է իսպանական ռազմածովային նավատորմի “Juan Carlos I” ծովակալի նավին: Նավը մշակվել է իսպանական “Navantia” սպառազինություն արտադրող ձեռնարկության կողմից և կառուցվում է թուրքական “Sedef” արտադրողի կողմից Լայպցիգում: Ընդհանուր առմամբ՝ պետք է ջուրն իջեցվեն երեք այդպիսի ավիակիրներ կամ երկկենցաղ հարձակողական նավեր:

Արտերկրի օգնությունը պետք է նկատի առնել նաև “Roketsan”-ի դեպքում: 1997 թ. “Kasirga” անունով չինական WS-1A և WS-1B հրթիռների լիցենզավորված արտադրության պայմանագրի ստորագրումից հետո 1998 թ. նման պայմանագիր ստորակրվեց CPMIEC-ի (“Chinese Precision Machinery Import and Export Corporation”) հետ չինական B-611 SRBM համակարգի համար: Այն նախատեսում է B-611 մարտկոցի լիցենզավորված արտադրություն:

Թուրքական TAI T129 Atak հարվածային ուղղաթիռը հիմնված է իտալական Fa. Augusta Westland-ի (այսօր՝ Fa. Finmeccanica) Agusta A129-ի վրա: Հետագայում այն զարգացվեց թուրքական TAI (Turkish Aerospace Industries) և “Aselsan” ֆիրմաների կողմից՝ իտալական “Agusta Westland” ֆիրմայի օժանդակությամբ: Atak-ն առաջ է մղվում Light Helicopter Turbine Engine Co.-ի երկու տուրբիններով:

Այս օրերի ընդհանուր քննարկման մեջ ամենաշատը հիշատակվում են թուրքական մարտական անօդաչու թռչող սարքերը, մասնավորապես՝ Bayraktar TB2-ը: Այն, ինչը դրան այդքան վտանգավոր է դարձնում, գերմանական արտադրության LRAT և MRAT հակատանկային հրթիռներն են: Այս հրթիռների որոշակի քանակի մատակարարումից հետո Դաշնային կառավարությունը հավանություն տվեց այդ մարտագլխիկների տեխնոլոգիայի

⁹ <https://jamestown.org/program/hot-issuethere-rise-of-turkey-the-mediterraneans-newregional-naval-power/#.UpXFmSctfRo>.

¹⁰ <https://blog.ard-hauptstadtstudio.de/ruestungsdeal-uboote-tuerkei-101/>.

¹¹ <https://www.defenceturkey.com/en/content/tcg-anadolu-lhd-a-naval-platform-thatwill-multiply-the-power-projection-capabilityof-turkish-navy-3335>.

արտահանմանը, ուստի “Roketsan” ֆաբրիկան դրանք, տակավին, ինքն է արտադրում¹²: Հրթիռների արձակման համակարգը մատակարարում էր ամերիկյան “L3 Harris” ֆիրմայի ենթակայության տակ գտնվող բրիտանական “EDO MBM Technology” ֆիրման¹³: LRAT-ն և MRAT-ն օգտագործվում են նաև Bayraktar TB2-ի զգալիորեն ավելի մեծ հետնորդ մոդելի կողմից, որը կոչվում է Akinci: Վերջինիս մեջ ներգրավված է նաև արտասահմանյան տեխնոլոգիա. դրա երկու Ivchenko-Progress AI-450C Turboprop շարժիչները ծագում են Ուկրաինայից: Իհարկե, Akinci-ն փոխարինող չէ հինգերորդ սերնդի կործանիչ օդաչուներին, որոնք Թուրքիան, ԱՄՆ-ի F-35 կործանիչի ծրագրից հեռացվելուց ի վեր, մինչև այժմ դեռ չունի:

Արտերկրի օգնությամբ, թե առանց արտերկրի օգնության. պետք է պնդել, որ Թուրքիան տիրապետում է ռազմական նշանակալի զինանոցի, որի «խարիզման» զգալի նշանակություն ունի նաև Հարավային Կովկասի համար: Միայն մտածեք այն մասին, որ Բաքուն ունի Bayraktar TB2 մարտական անօդաչու թռչող սարքեր և հետաքրքրություն է ցուցաբերել Akinci-ի գնման նկատմամբ:

Ակնարկի փորձ

Թուրքիայի՝ Արևելյան Միջերկրածովում բնական գազի որոնումը և ուրվագծվող ռազմական ընդհարումները, անկախ նրանից գործը դրան կհասնի, թե՛ ոչ, միայն մեկն են այն բազմաթիվ ընդհարումներից, որոնք իր հետ բերել է Թուրքիայի բացահայտ արտաքին ագրեսիվ քաղաքականությունը: Թուրքիայի ներգրավվածությունը Լիբիայում, ինչպես Արևելյան Միջերկրածովում, ի միջի այլոց, պայմանավորված է էներգիակիրների ապահովմամբ: Նրանք կարող են զգալիորեն նվազեցնել կախվածությունը օտարերկրյա մատակարարներից և, դրանից բացի, երկիրը դարձնել էներգիակիրների արտահանող: Դրանք, թուրքական տեսանկյունից, չափազանց կարևոր նպատակներ են, որոնցից երկիրը չի հրաժարվի նաև ԵՄ-ի կողմից վճռված հնարավոր պատժամիջոցների դեպքում՝ գոնե ոչ երկար ժամանակով: Քանի որ հակառակ դեպքում ներքաղաքական համակարգը, որի վրա, ի վերջո, հիմնվում է այս ագրեսիվ արտաքին քաղաքականությունը (Էրդողանը թեև որոշիչ դերակատար է, բայց միակը չէ) խիստ վտանգված կլինի: Մրան ավելանում են ուժային ֆանտազիաները, որոնցով հարբած են կուսակցական սահմաններից այն կողմ Թուրքիայի լայն շրջանակները: Այդ դեպքում դրանք կփլուզվեն:

Արևելյան Միջերկրածովում և Լիբիայում հաջողությունները նաև վճռորոշ նշանակություն կունենան 2023 թ. ընտրությունների համար: Եթե Թուրքիային հաջողվի ապահովել իր համար նավթի և գազի պաշարներ, դա կարևոր գործոն կլինի երկրի տնտեսական վիճակի բարելավման համար: Դա պարզորոշ կբարձրացնի ԱԶԿ-ի և նախագահ Էրդողանի ընտրվելու շանսերը: Չախտողումը կհանգեցնի հակառակին:

Մրանք դատողություններ են բազմաթիվ «եթե»-ներով և «բայց»-երով: Ամեն դեպքում՝ մնում են գրավիչ (ոչ միայն Արևելյան Միջերկրածովում և Լիբիայում, այլև՝ Հարավային Կովկասում):

¹² https://www.waffenexporte.org/wpcontent/uploads/2020/07/KA_Export-undTechnologietransfer-T%C3%BCrkei.pdf

¹³ <https://www.theguardian.com/news/2019/nov/27/revealed-uk-technology-turkey-riseglobal-drone-power>

